

3440



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«28» 03 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 037 - 24

Նախաձեռնողը՝

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 1

Գործունեությունը՝

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի
կենտրոնական մասնաշենքին հարող բակային տարածքի
վերակառուցման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն
քաղաք Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 037 - 24
«28» Տարբեր 2024թ.

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կենտրոնական մասնաշենքին հարող բակային տարածքի բարեկարգման և վերակառուցման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

| | |
|-------------------|---|
| Նախաձեռնող՝ | «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ |
| Փաստաթղթի տեսակը՝ | Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն (ՇՄԱԳ), նախագծային փաստաթղթեր |
| Տեղադրման վայրը՝ | Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջան |

Ներածական մաս. Համաձայն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն)՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամը նախատեսում է վերակառուցել և բարեկարգել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կենտրոնական մասնաշենքին հարող բակային տարածքը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը սահմանվում է որպես Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված 2022թ. նոյեմբերի 21-ի N 01/18-07/2-01/128946-1020 նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) հիման վրա անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման 03.03.2009թ. հ.2578314 վկայականով ամրագրված հողամասի սահմաններում (59.866.23 քմ), որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, իսկ օգտագործման նպատակը պետական համալսարանի շենք ու շինությունների սպասարկում:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության իրականացման տարածքը գտնվում է Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Ալեք Մանուկյան 1 հասցեում՝ արդեն իսկ կառուցապատված տարածքում: Գործունեության ենթակա տարածքը զբաղեցնում է 8.281 քմ տարածք, որի ոչ ջրաթափանց մակերեսը (ասֆալտապատ՝ 3.118 քմ, սալիկապատ՝ 344 քմ, ջրավազան՝ 225 քմ) կազմում է 3.687 քմ, իսկ ջրաթափանց (կանաչապատ) տարածքները՝ 3.822 քմ, այլ տարածքները (մուտքեր, աստիճաններ և այլն) կազմում են՝ 772 քմ: Տարածքում կատարված ուսումնասիրության արդյունքում գույքագրվել է 205 ծառ, որոնց տեսակային և քանակային կազմը ներկայացված է նախագծով: Տարածքում առկա են նստարաններ, ցայտաղբյուրներ, լուսատուներ, հուշարձաններ:

Երևանի պետական համալսարանի գլխավոր մասնաշենքը հանդիսանում է հանրապետական նշանակության հուշարձան: Բակային տարածքում առկա են երեք արձաններ՝ Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի արձանախումբը, Մովսես Խորենացու տեղական նշանակության հուշարձանը և Անանիա Շիրակացու արձանը:

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը գտնվում է Արարատյան հարթավայրի հյուսիս արևմտյան եզրամասային հատվածում, որտեղ ուղիներ



ունի մեղմ թեքություն: Ըստ Հայաստանի Հանրապետության տարածքի հավանական սեյսմիկ վտանգի գոտիավորման ՀՀԸՆ 20.04.2020թ. քարտեզի՝ տեղամասը գտնվում է II սեյսմիկ գոտու մեջ՝ գրունտի սպասվելիք արագացումների մեծություններով՝ A, ազատ անկման g արագացման մասերով՝ $A_{max}=0.4g$ և ունի 8-9 բալ սեյսմակայնություն:

Ուսումնասիրվող տարածքին բնորոշ է շոգ և չոր ամառը՝ հուլիսի միջին ամսական ջերմաստիճանը 24.5°C , միջին տարեկան հարաբերական խոնավությունը 49%, լեռնահովտային քամիները 2-3 մ/վրկ արագությամբ և ցուրտ անհողմային ձմեռը՝ հունվարի միջին ամսական ջերմաստիճանը -2.9°C է:

Ծրագրի շրջանակներում իրականացվող «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կենտրոնական մասնաշենքին հարող բակային տարածքի բարեկարգման և վերակառուցման նպատակը ժամանցային բաց տարածքների ընդլայնումն է:

Բակային տարածքի վերակառուցման ցուցանիշներն են՝

- սալարկում՝ 3.691 քմ, չոր շատրվան՝ 225 քմ, ջրաթափանց մակերես՝ 3.803 քմ, որում՝
- կանաչապատում՝ 2.927 քմ, խճապատում՝ 876 քմ:

Նախատեսվող գործունեության իրականացման շրջանակներում նախատեսվում են հետևյալ աշխատանքները՝

- գոյություն ունեցող տարերային՝ տարիների ընթացքում քանդված աստիճանների վերականգնում, նոր սալիկների տեղադրում (53 մ^2): Աստիճանների հարակից մայթի մի հատվածը կհանդիսանա թեքահարթակ և կծառայի նաև որպես ջրահեռացման համար:
- գոյություն ունեցող ցայտաղբյուրների ապամոնտաժում, սալարկումից հետո վերատեղադրվելու են՝ պահպանելով նույն տեսքը և տեղադիրքը:
- տարածքում առկա ստորգետնյա խորքային հորի շրջակայքում ստորգետնյա ջրամբարի, իսկ ոռոգման և չոր շատրվանների համար պոմպակայանի կառուցում:
- հաշմանդամ և սակավարժ բնակչության համար գլխավոր մասնաշենքի մուտքի աստիճաններին կից վերելակի տեղադրում, որը պերզուլաների կիրառության շնորհիվ ծածկվելու է մագլցող բույսերով ու ծաղիկներով:
- համաձայն ԿԳՄՍ նախարարության գիտամեթոդական խորհրդի նիստի արձանագրության քաղվածքի՝ շինարարության ընթացքում տեղափոխվելու է միայն Անանիա Շիրակացու արձանը (տեղադրվելու է Մեխանիկայի ֆակուլտետի մուտքի մոտ):

Համաձայն էլեկտրամատակարարման և լուսավորության նախագծի՝ էլեկտրամատակարարման սնուցումը կատարվելու է գոյություն ունեցող գլխավոր մասնաշենքի աստիճանավանդակի տակ գտնվող ցածր լարման սենյակից՝ մաս կազմելով առկա ցանցին: Էլեկտրամատակարարումն իրականացվում է 5 և 3 զճանի սխեմայով, 380/220 Վ լարմամբ, 50 Հց հաճախականությամբ: Լուսավորությունն իրականացվելու է էներգախնայող ԼԵԴ լուսատուների կիրառմամբ:

Ջրամատակարարումն իրականացվելու է գոյություն ունեցող ջրամատակարարման ցանցից: Տարածքի մակերևութային ջրերը հեռացվելու են կազմակերպված եղանակով՝ հեղեղատար կոյուղու համակարգի միջոցով: Տարածքի ցածրադիր տեղերում տեղադրվելու են անձրևընդունիչ հորեր, որտեղից անձրևաջրերը հեռացվելու են՝ միանալով գործող քաղաքային հեղեղատար ցանցին:

Նախապատրաստական փուլում իրականացվելու են տարածքի ցանկապատում, գոյություն ունեցող կոմունիկացիաների վերատեղադրում կամ հեռացում, վարչակենցաղային և սանիտարահիգիենիկ շինությունների տեղադրում, ժամանակավոր ինժեներական ցանցերի տեղադրում, մեքենաների և մեխանիզմների կոլեկտորում շինհրապարակ, բանվորների հրահանգավորում անվտանգության կանոնների վերաբերյալ,



անվտանգության նշանների տեղադրում, հակահրդեհային միջոցների տեղադրում և այլն: Աշխատողների սանիտարակենցաղային պայմաններն ապահովելու են՝ համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2012թ. սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանի:

Աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող բիոզուգարանից, ինչի սպասարկումն իրականացվելու է համապատասխան մասնագիտացված կազմակերպության կողմից պայմանագրային հիմունքներով: Աշխատանքների ավարտից հետո այն ապամոնիտավելու է:

Շինարարական աշխատանքների տևողությունն է 6 ամիս, աշխատողների առավելագույն քանակը՝ 34 մարդ, շինհրապարակը գործունեության ենթակա ամբողջ տարածքն է: Շինարարական նյութերից օգտագործվելու են բնական ներմուծված փայտ, մետաղական խողովակներ և թիթեղներ, երկաթբետոն և խրամաբետոն, բետոնե տոմետ, տարբեր տրամաչափի խիճ, ավազ և այլն: Օգտագործվող հիմնական շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների ցանկում ներառվել է 22 շինմեքենա, այդ թվում ավտոկոունկ, էքսկավատոր, ավտոբեռնիչ, շարժական կոմպրեսոր և այլն:

Ապրանքային բետոնը շինհրապարակ է տեղափոխվելու պատրաստի վիճակում՝ բետոնատար ինքնաթափերի միջոցով ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան գործող ավտոմատ բետոնա-շաղախային հանգույցից:

Ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման և որոշ շինարարական աշխատանքներ իրականացնելու համար, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի կենցաղային կարիքները հոգալու նպատակով: Աշխատողների խմելու և կենցաղային նպատակների համար անհրաժեշտ ջրաքանակը շինհրապարակ կմատակարարվի տարածքում գոյություն ունեցող ջրամատակարարման ցանցից: Տեխնիկական ջրաքանակի ապահովումն իրականացվելու է մեքենաներով բերելու եղանակով՝ մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը կապալառու կազմակերպության կողմից ջրօգտագործման թույլտվություն ունեցող ջրամատակարար կազմակերպության հետ կնքված պայմանագրի հիման վրա:

Նախատեսվող գործունեության շինարարական աշխատանքների իրականացման ժամանակ հողային աշխատանքների ծավալը հաշվարկվել է 993,4 մ³ գրունտային հանույթ, հետլիցքի ծավալը (լիցք) կազմել է 628,37 մ³: Չօգտագործված հողային զանգվածը՝ 365.04 մ³ խմ ծավալով տեղափոխվելու է Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնատեսակներն են՝ 246.0 կգ կենցաղային և 200.0 խմ խառը շինարարական աղբը, ինչպես նաև շինարարական աշխատանքների համար ոչ պիտանի հողային գրունտները: Շինարարության և շահագործման փուլերում կենցաղային աղբի հեռացումը տարածքից իրականացվելու է մասնագիտացված կազմակերպության կողմից՝ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան: Համաձայն Երևանի քաղաքապետարանի կողմից տրված թույլտվության՝ շինարարական թափոնները տեղափոխվելու են Աջափնյակ վարչական շրջանի Սիլիկյան թաղամասին հարող նախկին քարհանքի անօգտագործելի խորշերի տարածք և Էրեբունի վարչական շրջանի Նուբարաշենի խճուղի 4 հասցեին հարող աղբի տեղադրման վայր:

Արտադրական հոսքաջրերը հեռացվելու են շինհրապարակում տեղադրված պարզարան: Անձրևաջրերից առաջացող մակերևութային հոսքաջրերը կուղղորդվեն բակային սելավային ջրացանց, այնուհետև պարզարան: Պարզեցված ջուրը կօգտագործվի արտադրական հրապարակի ջրցանման և անիվների լվացման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:



Գործունեության վայր շինտեխնիկան և ավտոմեքենաները մոտենալու են գոյություն ունեցող ճանապարհով: Շինարարական տեխնիկայի վառելիքի լիցքավորումը և սպասարկումն իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում: Էլեկտրամատակարարումը և ջրամատակարարումը կատարվելու է գոյություն ունեցող համակարգերից:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո տարածքի կանաչապատումն և բարեկարգումն իրականացվելու է ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N108-Ն որոշման համապատասխան՝ համաձայն Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատված բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի՝ տարածաշրջանին և կլիմայական պայմաններին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ:

Նախագծման ընթացքում իրականացվել է տարածքում առկա ծառերի գույքագրում՝ Բուսաբանության և սնկաբանության ամբիոնի կողմից: Համաձայն ներկայացված մասնագիտական եզրակացության՝ հատման ենթակա ծառերի քանակը կազմում է 18 հատ (4 հատ ուռենի, 12 հատ կենսածառ, 1 հատ կաղնի ամառային, 1 հատ թխկի սպիտակ), նոր տնկվող ծառերի քանակը՝ 32 հատ: Նոր տնկվող ծառատեսակների ընտրությունը կատարվել է հաշվի առնելով ծաղկման շրջանը, սաղարթի գույնը, բույսի չափերն ու տեղադիրքը: Կանաչապատման նախագծով նկարագրվել են տեղադրվելիք, փոխարինվող և փոխհատուցված բուսատեսակների ճշգրիտ տեղադիրքը և քանակները, ընդհանուրը՝ 205 հատ ծառ (ներառյալ նոր տնկվող 32 հատ ծառերը): Բուսատեսակների ընտրությունը կատարվել է հաշվի առնելով բնակլիմայական պայմանները, ոչ հատուկ պահանջները հողերի նկատմամբ, դիմացկունությունը գազերի, փոշու, օդի աղտոտվածության հանդեպ, գեղազարդ տեսքը: Կանաչապատման համար նախատեսվում է օգտագործել արդեն իսկ պահեստավորված 256.7 խմ հողի բերրի շերտը, որի տեղափոխումը, պահեստավորումն ու հետագա օգտագործումն իրականացվելու է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Կանաչապատ տարածքների, ծառերի ու սիզամարգերի ջրումն իրականացվելու է ոռոգման համակարգի միջոցով: Անհրաժեշտ ճնշում և ջրաքանակ ապահովելու համար տեղադրվելու է ոռոգման ջրի ստորգետնյա պոմպակայան և ջրամբար 27 խմ ծավալով: Շատրվանի ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել տարածքում գոյություն ունեցող ոռոգման ցանցից՝ իրավասու մարմնից ձեռք բերված թույլտվությունների հիման վրա: Ջրի շրջապտույտը և համակարգի դատարկումն իրականացնելու համար նախատեսված է ստորգետնյա ե/բ ջրամբար:

Հաշվետվությունում ներառված է այլընտրանքային վերլուծություն՝ ներկայացված տարբերակի հիմնավորումով:

Շինարարության փուլում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված են արտանետումներով, որոնք կարող են առաջանալ բակային տարածքի վերակառուցման փորման ընթացքում, դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ, հողային զանգվածների և շինաղբի տեղափոխման, շինհրապարակների տեղադրման հետ կապված, բետոնային աշխատանքների իրականացմամբ, մեքենաների և տեխնիկայի տեղաշարժից պատճառվող անհանգստությամբ, շինարարական տեխնիկայի շահագործման ընթացքում աղմուկի մակարդակի ավելացմամբ:

Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների կանխարգելմանն կամ մեղմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագրով նախատեսվում է՝



- օդային ավազան փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով պարբերաբար ջրցանի իրականացում,
- շինաշխատանքների ընթացքում աղմուկի և թրթռումների վերահսկողություն,
- սորուն շինարարական նյութեր տեղափոխող մեքենաների երթևեկության կազմակերպում թափքի ծածկման պայմաններում,
- շինարարական աղբի տեղափոխման համար փակ ծածկ ունեցող մեքենաներ օգտագործում,
- շինհրապարակ մուտք գործող և դուրս եկող մեքենաների անվադողերի լվացում,
- շինհրապարակում սորուն նյութերի պահեստավորում շինանյութի համար նախատեսված ժամանակավոր պահեստներում կամ ծածկում անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,
- շինհրապարակի առանձնացնում մետաղաթիթեղյա ցանկապատով կամ հատուկ մեկուսիչ թաղանթով,
- շինարարական հրապարակում թափոնների ժամանակավոր կուտակման վայրերի նախատեսում, տարածքում թափոնների բաց այրումի բացառում, նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը,
- արտակարգ իրավիճակների դեպքում համապատասխան կլանիչներով տարածքի մաքրում, աշխատողների անվտանգության ապահովում,
- նորատունկ ծառերի և բուսականության խնամք և մշտադիտարկում և այլն:

Շրջակա միջավայրի պահպանման և վերջինիս բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են օդային ավազան արտանետումների, հողային և ջրային ռեսուրսներ վտանգավոր նյութերի, այդ թվում տրանսպորտային միջոցներից և սարքավորումներից յուղերի հնարավոր ներթափանցման կանխարգելմանը, աղմուկի և թրթռումների կառավարմանը և դրանց պահպանմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ և մշտադիտարկումներ:


Փորձաքննական եզրահանգումներ. «Երևանի պետական համալսարան»

հիմնադրամի կենտրոնական մասնաշենքի հարող բակային տարածքի վերակառուցման և բարեկարգման աշխատանքներն իրականացվելու են խիստ կառուցապատված տարածքում և ուսումնական հաստատության անընդմեջ շահագործմանը համընթաց: Նշված հանգամանքները հաշվի առնելով՝ աշխատանքները կազմակերպվելու են փուլային, ինչը պատկերված է գրաֆիկական մասի գծագրերում:

Համաձայն Հաշվետվության՝ նախատեսվող գործունեության իրականացման (շինարարության փուլ) հետևանքով շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները (հանրապետական և տեղական նշանակության հուշարձանների, ծառաբուսականության, համայնքի, բնական լանդշաֆտի, կենսաբազմազանության և շրջակա միջավայրի այլ բաղադրիչների վրա) լինելու են փոքրածավալ, կարճաժամկետ և տեղայնացված, կրելու են ժամանակավոր բնույթ:

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կենտրոնական մասնաշենքին հարող բակային տարածքի վերակառուցման և բարեկարգման իրականացման ընթացքում 18 ծառերի հատման անհրաժեշտության վերաբերյալ ներկայացվել է մասնագիտական եզրակացություն՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության հետ համաձայնեցված: Հաշվետվությանը կից ներկայացվել են նաև ծառահատմանը վերաբերող այլ փաստաթղթեր:

Հաշվետվության փորձաքննական գործընթացին մասնակցել են առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի և քաղաքաշինության կոմիտեները, Երևանի քաղաքապետարանը, Կենտրոն



վարչական շրջանը: Հաշվետվությունը լրամշակվել է նաև ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա:

Օրենսդրությամբ սահմանված կարգով փորձաքննության բոլոր փուլերում Երևանի Կենտրոն վարչական կենտրոնում իրականացված հանրային քննարկումներում նախատեսվող գործունեությունը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել տարածքում սանիտարական պայմանների պահպանմանը և գնահատման հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ նախատեսել լրացուցից միջոցառումներ:

- Հաշվետվությամբ և նախագծով նախատեսված 18 ծառերի հատումն իրականացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչություն ներկայացված և հաստատված բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի համաձայն:

- Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով աղմուկի և ճանապարհների առավելագույն ծանրաբեռնվածությունը:

- Բետոնի տեղափոխումն իրականացնել Հաշվետվությունում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

- Առաջնորդվել «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՕ-261 օրենքով (11.10.1998թ.) սահմանված պահանջներով:

- Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման պահանջով՝ գործունեության իրականացման ընթացքում պատմամշակութային արժեք ունեցող կամ հնագիտական շերտերի հայտնաբերման դեպքում անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքերը՝ տեղյակ պահելով ոլորտը կարգավորող լիազոր մարմնին: Աշխատանքները վերսկսել լիազոր մարմնի թույլտվությունից հետո:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից ներկայացված՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կենտրոնական մասնաշենքին հարող բակային տարածքի բարեկարգման և վերակառուցման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ,
առաջատար մասնագետ՝


Աստղիկ Վարդանյան